

ԼՈՒՅՄ Է ՏԵՄԵԼ

ՆՈՐ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆ ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՑՅԱԼԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԳ

«Դոնի հայկական համայնքը նորագույն շրջանում պատմություն, ինստիտուտներ, ինքնություն» գիտական հոդվածների ժողովածուն ընդգրկում է ՀՀ ԿԳՄՄԼ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծի աջակցությամբ «ՀՀ ԿԳՄ ԳՊԿ-ՀՀՈՂ-2018» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված «Դոնի հայկական համայնքը նորագույն շրջանում. պատմություն, ինստիտուտներ, ինքնություն» գիտական ծրագրի (ծածկագիրը RF-074) շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքները:

Ժողովածուն կազմել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը: Աշխատությունը նախատեսված է պատմաժողովրդագրության հարցերով զբաղվող մասնագետների, պատմաբանների, ինչպես նաև ընթերցող լայն հասարակության համար:

Ժողովածուում անդրադարձ է կատարվում Դոնի հայկական համայնքի նորագույն շրջանի ամբողջական պատմությանը իր բազմաթիվ ոլորտներով սկսած քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմությունից և վերջապես համայնքի ազգագրական ուսումնասիրություններով: Դոնի Ռոստովի գիտնական հետազոտողները Լ. Վ. Բատինը, Ս. Յ. Սուշինը, Մ. Կազարովը, Ս. Սայադովը և ուրիշներ, անդրադարձել են Դոնի նահաջական հայկական համայնքի 18-19-րդ դարերի, նաև 20-րդ դարակերպ պատմությանը, նրա ինքնավարության, ցարիզի կողմից արտոնությունների տրամադրման, համայնքում ոստիկանության ծառայության վերականգնման փորձերին, ինչպես նաև դրիմահայության մշակութային-պատմական ժառանգության պահպանման հիմնախնդիրների քննությանը: Չափազանց հետաքրքրությամբ է ընթերցվում Լ. Բատինի և Բ. Մինասյանի ՀՀ ազգային արխիվի կուրթեր հիման վրա գրված համատեղ հոդվածը, որը վերաբերում է 18-րդ դարավերջից մինչև 19-րդ դարի կեսերն ընդգրկող ժամանակահատվածում Դոնի նահաջական հայկական համայնքի ինքնավարության պատմական փաստաթղթերի վերլուծությանը: Հոդվածում տարաբնույթ ըստ վերլուծության Վիդուշիևի և Միխայելի Նախարարության հրապարակած փաստաթղթային կուրթերի, տարբերակի և տպագիր այլ սկզբնաղբյուրների, ՀՀ աշտանական տեղեկագրերի, մամուլի, Դոնի Ռոստովի նահաջական հայկական համայնքի հաշվետվությունների, հրապարակի վրա եղած գրականության հիման վրա վերլուծվում է ցույց են տրվում 1991-2019 թթ. Հայաստանի անկախ հանրապետության կապերն ու փոխհարաբերությունները Դոնի Ռոստովի հայկական համայնքի հետ հասարակական-քաղաքական, գիտակրթական և հոգևոր-մշակութային, սպորտային ոլորտներում: Փաստերի համադրմամբ հիմնավորվում է, թե ինչպես ՀՀ անկախության վերականգնումը, ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումը որակական նոր փոփոխություններ առաջ բերեցին հայրենիք-Սփյուռք առնչություններում, մասնավորապես Հայաստանի Հանրապետության և Դոնի Ռոստովի հայկական համայնքի կապերի ու փոխհարաբերությունների ոլորտում՝ ավելի արագացնելով և զարգացնելով դրանք:

Դոնի նահաջական հայկական համայնքի ստեղծման պատմությանը է վերաբերում պ.գ. ղոգենտ Հ. Ալեքսանյանի հոդվածը, որն ունի համակրան, որում ներկայացված է Դոնի հայության պատմության հիշարժան իրադարձությունների ցանկը: Պ.գ. ղոգենտ Մ.Ի. Միխայելի Սիբիր Գարբիլյանի հոդվածում վերլուծվում է Դոնի հայ համայնքի ազգագրական պատմությունը: Համայնքի ներքին կյանքի, ավանդույթների, մշակութային-կենցաղային բարքերի ներկայացումը բացահայտում է հայ համայնքի հասարակական կյանքի բազմաթիվ ծախքերը: Չեղիկների վրա մասը, հատկապես Դոնի Ռոստովի գիտնական հետազոտողները, առանձին հոդվածներ են նվիրել Դոնի հայ համայնքի նոր դարաշրջանի պատմության, այդ թվում սոցիալ-տնտեսական, վարչական բարեփոխումներին, ոստիկանական համակարգի առկայության հիմնախնդիրներին ամբողջացնելով Դոնի հայության նոր և նորագույն շրջանների պատմությունը:

Պ.գ. ղոգենտ Ս. Յ. Սուշինի իր մի շարք հոդվածներում ուսումնասիրել է Դոնի նահաջական հայ համայնքի սոցիալ-ժողովրդագրական փոփոխությունները, որոնք ընդգրկում են ոչ միայն 19-20-րդ դարերը, այլև 21-րդ դարակերպը: Հարավային դաշնային համալսարանի հին աշխարհի պատմության և հնագիտության ամբիոնի վարիչ Ս. Կազարովի հոդվածները վերաբերում են Դոնի հայերի հոգևոր կյանքի

վերածնունդին 20-րդ դարավերջին և 21-րդ դարակերպին: Պ.գ. ղոգենտ Ս. Սայադովի հոդվածը՝ «Փաստաթղթերի ժողովածուն որպես Նոր Նախիջևանի պատմության ուսումնասիրության կարևորագույն սկզբնաղբյուր», ունի պատմական նշանակություն և ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի է, որ Դոնի Նոր Նախիջևան քաղաքը հիմնադրվել է Դրիմի հայաբնակ վայրերից Ռուսական կայսրության կազմակերպած գաղթի հետևանքով, Եկատերինա Երկրորդ կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակի հիման վրա: Ռուսական կայսրության հարավային շրջանները բնակեցնելու քաղաքականության կենսագործման արդյունքում 1878 թ. գաղթի ուղին բռնած դրիմահայ գանգավոր, որի հիմնական մասը Դրիմ տեղափոխված հայոց միջնադարյան մայրաքաղաք Անիի նախկին բնակիչների

հետևում էին մագիստրատի հրամանների և հանձնարարությունների կատարմանը, որոնք վերաբերում էին օրինականության պահպանմանը, հարկերի գանձմանը, հանրապետության անցկացմանը և այլ հարցերի: 1811 թ. հաստատվեց Դոնի հայկական համայնքի գիտնաչափ, ուր պատկերված էին հայերի աշխատասիրությունը խորհրդանշող մեդալներ և փեթակներ: Նույն թվականին հաստատվեց Նախիջևան քաղաքի նոր հատակագիծը, որը պահպանում էր փողոցների ուղղանկյուն ցանցը, քառանկյուն թաղամասերը և նախկին հատակագծի մյուս հատկանիշները, հիմնվեց քաղաքազվյալ պատնոնը, որը տնօրինում էր հասարակական եկամուտներն ու ծախսերը:

18-րդ դարավերջին ագատագրական շարժումների աշխուժացման, Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետականությունը վերականգնելու ակնկալությունների շրջանում Դոնի ափերին զուտ հայկական քաղաքի և հինգ հայկական գյուղերի հիմնադրումը, հայությանը տրված լայն ինք-



Նկարում ձախից աջ՝ Սերգեյ Սայադովը, Սերգեյ Սուշին, Միխայել Նուխաճյանը, Էդիկ Մինասյանը, Լևոն Բատինը, Միխայիլ Գարբիլյանը, Սարգիս Լազարովը հայերին Դոնի երկրամասում վերաբնակեցնելու 240-ամյակին նվիրված համաժողովին (Դոնի Ռոստով):

ժառանգներն էին, երկար թափառումներից հետո հանգրվան է գտնում Դոնի գետափնյա հարթավայրում և Դրիմի Ռոստովում ստեղծվող (այժմ՝ Դոնի Ռոստով) մի քանի կիլոմետր հեռու հիմնելով Նախիջևան քաղաքը, իսկ նրա մտակալքում՝ Չալթը, Թուփոն, Մեծ Մալա, Մուրթան Մալա և Նևալիտա հայկական գյուղերը:


Նոր Նախիջևանը մինչև 19-րդ դարի կեսերը աչքի էր ընկնում որպես արհեստագործական և առևտրական կայուն նկարագր ունեցող քաղաք, որին մեծապես նպաստեցին կայսրության հարավի ջրային ուղիները, մասնավորապես Ռոստովի և Տագանրոգի նավահանգիստներով արտահանվող մետաղի հումքը: Դրախ շուկաներում հոչակված էին Նախիջևանի հայ վարպետների պատրաստած իրերը, որոնցով առանձնակի հետաքրքրվել են նույն կայսրերը, մասնավորապես կայսրուհի Եկատերինա Երկրորդը: Հենց նրա 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով դրիմահայերը ստացան մեծ առանձնաշնորհումներ: Այն օրենսդրական կարևորություն մի փաստաթուղթ էր, որով սահմանվում էր նորահաստում հայ գաղութի (այսուհետ համայնքի) իրավասությունը, և մեծապես կանխորոշվում էին նրա զարգացման հետանկարները:

Նախիջևան անուկով հատուկ քաղաք հիմնելու և քաղաքին 12000 դեսյատին հողատարածություն ստանալու գուժահեռ հրովարտակում պահանջվում էր հայ հասարակությանը տարտաքով ազատել բոլոր հարկերից և պետական ծառայություններից, քաղաքում հաստատել մագիստրատ և այնտեղ ազգային սովորություններին ու իրավական նորմերին հիման վրա ղառ ու դատաստան վարել ընտրված դատավորների միջոցով:

Կայսերական շնորհագրի ընձեռած հնարավորությունների շրջանակներում ձևավորվեց նորահաստում հայ համայնքի ինքնավարությունը: Դատավարությունը և գործառնությունը կատարվում էին հայերեն և Աստրախանի կամ «Հայկական դատաստագրի» հիման վրա, որը կազմվել էր Միխայիլ Գոչի «Դատաստագրի», ազգային սովորության նորմերի ու ռուսական օրենքերի հիման վրա, ճանաչվել էր պետության կողմից և բացի Նոր Նախիջևանից կիրառվում էր նաև Աստրախանի, Ղզաբի, Մոզդուկի հայկական գաղթօջայխներում: Հայկական և գյուղերում մշտապես պահպանվում էին կառավարման տեղական օրգանները հանձնավագի և չորս ձեռքերի խորհրդի, որոնք

նավարությունը մեծ սպավորություն թողեցին ժամանակի հայության և հատկապես հայոց ագատագրական շարժումներով հետաքրքրվող նվիրյալների, կազմակերպող ուժերի վրա: Այդ առումով հետաքրքրական են հայ ագատագրական շարժման ավանդարդում գտնվող հնդկահայերի կողմից Նախիջևանում հայկական դպրոց հիմնելու նպատակով մեծագույնը նվիրատվություններ կատարելը, Լազարյան ձեռնարանը Մոսկվայի փոխարեն Նոր Նախիջևանում հիմնելու մտահղացումը, Խաղարյանի հայկական տպարանը Պետերբուրգից Նոր Նախիջևան տեղափոխելու իրողությունը և այլ փաստեր: Ռուսական արքունիքը, դրիմահայությանը ազգային սովորությունների և ավանդույթների վրա խարսխվող ինքնավարություն տալով, յուրովի արձագանքում էր հայոց ագատագրական ցանկություններին: Հուսադրելով հայերին ցարական կառավարությունը Այսրկովկասը Ռուսաստանին միացնելու նպատակ ունեղ, որի համար հետամուտ էր նաև համակիրներ շահելու երկրամասի ժողովուրդների մեղ: Ցասրական Ռուսաստանի պետական ատյաններում բազմակողմանի քննարկումներից հետո 1870 թ., ի վերջո վերացվեց հայկական մագիստրատի գործունեությունը, հետևաբար նաև Նոր Նախիջևանի հայ համայնքի ինքնավարությունը: Նոր Նախիջևանը Ռուսաստանին միացնելուց հետո նպատակահարմար համարվեց երկու քաղաքներում էլ մտցնել կառավարման միասնական եղանակները: Դոնի հայկական համայնքը միշտ էլ ակտիվորեն արձագանքել է ռուսական կյանքի խոշոր իրողություններին, մասնավորապես 19-20-րդ դարերում անսկան չի մնացել երկրին սպառնացող արտաքին վտանգներից սկսած 1812 թ. հայրենական պատերազմով, ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմներից մինչև Առաջին և Երկրորդ աշխարհամարտեր: Հայերը գործունե մասնակցություն են ունեցել պատերազմական իրողություններին: Դոնի հայությանը մշտապես օգնել է ռուսական գործքին ֆինանսական միջոցներով:

Դոնի հայկական համայնքը միշտ աշխույժ հարաբերությունների մեղ է եղել մայր հայրենիքի և հայկական գաղթօջայխների հետ: Մայր հայրենիքի հետ կապերն ու շփումներն իրականացվել են բազում եղանակներով: Այն առաջին հերթին կատարվում էր եկեղեցու միջոցով: Նախիջևանցիներն ունեին կրոնական սովորությունով պայմանավորված մայր



ԳՈՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻ ԻՆՏԵՐՆԵՏԻՆԸ, ԻՆՏԵՐՆԵՏԻՆԸ

հայրենիքի հետ կապվելու ավանդույթ, ինչպես Դոնի հայության շրջանում մեծ տարածում գտած ուխտագնացությունը Երուսաղեմ, Մշո Մուրբ Կարապետի վանք և Անի: Հայաստանի հետ հասարակական, մշակութային կապերն առավել սերտացան 19-րդ դարավերջին և 20-րդ դարակերպին: Երկարուղիների և առհասարակ հարողորակության միջոցների զարգացումը մեծապես նպաստեց երիտասարդության և մտավորականների փոխայցելություններին ու կապերի ամրապնդմանը: Մովորություն դարձան Նոր Նախիջևանի ուսումնարանների բարձր դասարանների այցելությունները Հայաստան և Անդրկովկասի հայաշատ վայրեր: 1909 թ. թեմական դպրոցի տեսուչ Ե. Շահագիլը հոգաբարձությունից դարձավ միջոցներ է խոնդրել աշակերտների ուղևորությունը դեպի Հայաստան կազմակերպելու համար:

Նոր Նախիջևանի նշանավոր մտավորականները Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը այցելել են Թիֆլիս, Երևան, Էջմիածին: Թիֆլիս է այցելել նաև Գ. Չալխուշյանը: Դոնի հասարակական կյանքում կարևոր իրողություններ էին հայոց կաթողիկոսների փոխայցելությունները: Նրանք ռուսահայ թեմեր այցելելուց հետո, որպես կանոն, կանգ էին առնում Նոր Նախիջևանում: Բարձր ընդունելություն են արժանացել 1876 թ. Գևորգ Չորրորդը, 1896 թ. Խրիմյան Հայրենիքը, 1909 թ. Մաթևոս 2-րդ Բովիլյանը, 1912 թ. Գևորգ 5-րդը, իսկ Գևորգ 6-րդը ձմռանը նորնախիջևանցի էր:

Դոնի հայկական համայնքում տեղի են ունեցել նաև հասարակական-մշակութային այնպիսի միջոցառումներ, որոնք համագային հնչեղություն են ստացել: Այդպիսի իրողություն օրինակ է 1901 և 1902 թվականներին Մուրբ խաչ վանքի բակում քանդակագործ Ա. Տեր-Մարտիանի կողմից մեծամասն հայեր Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի կիսանդրիների կանգնեցումը: Միջոցառումներ երկր են գրտնվել նաև հայրենիքից ժամանած մտավորական գործիչներ: Նոր Նախիջևանի այս նշանավոր հայ գրողների հուշարձանի բացումը ստացել է հայկական մշակույթի գնահատման համագային բնույթ:

Նոր Նախիջևանի հայ համայնքը մշտապես օգնություն էր տրամադրում և մեկնել ցեղասպանության ենթարկված արևմտահայությանը, գուրմարներ է հատկացրել Էջմիածնի ձեմարապետի, տպարանին կարիքները հոգայր համար: 1915 թ. Նոր Նախիջևանը ապաստան է տվել 500 գաղթականին:

Դոնի հայկական համայնքի կապերը հայրենիքի հետ ամրապնդվեցին նորագույն ժամանակաշրջանում, որի լուսաբանման էլ նվիրված է հոդվածներից մինչև ժողովածուն: Դոնի նոր բնակավայրում հաստատված նախկին դրիմահայերի 140-ամյա պատմությունը կյանքի են լուսաբանվել է Վլադիմիր Բարխուդարյանի երկու սովորաբանվալ մեմագրություններում («Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.)», Երևան, 1967 և «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.)», Երևան, 1985): Արխիվային տարատեսակ փաստաթղթերի, կուրթերի, առկա գրականության և մամուլի տվյալների հիման վրա գրված այդ մենագրություններում արտացոլվել է Ռուսաստանում նոր շրջանի ակնհայտորդ հայկական գաղութի ամբողջական պատմությունը իր հիմնական դրսևորումներով՝ հիմնադրումից մինչև Ռուսաստանի հարավի տնտեսական վերելքը, Նախիջևանի հայության մշակութային և հասարակական-քաղաքական կյանքն ու իրավական դրությունը: Նշված հարցերին նաև անդրադարձել են ռուս հեղինակները, Դոնի հայ համայնքի ներկայացուցիչները: Մական բաց են մնացել Դոնի հայ համայնքի նորագույն պատմության հիմնախնդիրները, որոնց լուսաբանման էլ ձեռնամուխ եղանք ՀՀ, հիմնականում Երևանի պետական համալսարանի և Ռոստովի հարավային դաշնային համալսարանի մի խումբ գիտնականներ կազմելով Դոնի հայկական համայնքի նորագույն շրջանի ամբողջական պատմությունը ներկայացնող տույն ժողովածուն: